

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

**«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՍԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ
Ծ Ր Ա Գ Ի Ր**

Կազմեց դոցենտ Գ. Վ. Պետրոսյանը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կազմակերպություններում կադրային գործի կազմակերպման իրավական կարգավորումը» դասընթացը իրավաբանական կրթություն իրականացնող բուհերի մագիստրատուրայի «Գործարարական իրավունք» մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասավանդվող առարկա է: Այն ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերություններ կարգավորող օրենքների և դրանց համապատասխան ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները կազմակերպությունում պահպանելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացման գործընթացը: Դասընթացն ուղղակիորեն կապված է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք» առարկայի հետ և հենվում է ՀՀ աշխատանքային օրենսդրության սկզբունքներին:

«Կազմակերպություններում կադրային գործի կազմակերպման իրավական կարգավորումը» վերտառությամբ դասընթացի խնդիրն է մանրամասն ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող կազմակերպություններում աշխատողներ ընդունելու, նրանց աշխատանքը կազմակերպելու, աշխատանքի պայմանները փոփոխելու, ներառյալ՝ այլ աշխատանքի փոխադրելու, աշխատողների անձնական տվյալները պահպանելու, նրանց հանգստի իրավունքն ապահովելու, աշխատանքային գործունեության մասին փաստաթղթերում գրառումները ճիշտ կատարելու, աշխատողներին խրախուսելու, պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև նրանց հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու ուղղությամբ կիրառվելիք միջոցառումները, հիշյալ ուղղություններով գործատու-կազմակերպությունների կողմից ձեռնարկվող իրավաբանական գործողությունները:

«Կազմակերպություններում կադրային գործի կազմակերպման իրավական կարգավորումը» դասընթացի ուսումնասիրումն անհրաժեշտ է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի, աշխատանքային հարաբերություններ կարգավորող այլ օրենքների, նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողություն ու վերահսկողություն իրականացնող մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից իրենց գործառույթների իրականացման ընթացքում կազմակերպության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու և կազմակերպության համար անցանկալի իրավական հետևանքները կանխելու նպատակով:

Կապված Հայաստանի Հանրապետության նոր աշխատանքային օրենսգրքի և վարձու աշխատանքի կազմակերպման, կիրառման ու պաշտպանության ոլորտում առաջացող աշխատանքային հասարակական հարաբերություններ կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման և գործող ակտերում կատարված

փոփոխությունների հետ, զգալի փոփոխություններ են կրել նաև քննարկվող ոլորտում կազմակերպությունների գործառույթների լիազորությունների շրջանակի վերաբերյալ հարցերը:

«Կազմակերպություններում կադրային գործի կազմակերպման իրավական կարգավորումը» անվանումով դասընթացի ծրագիրը շարադրվել է ՀՀ Սահմանադրության և ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթներին համապատասխան, համանուն խնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության աղբյուրների ուսումնասիրության հիման վրա:

Դասընթացի ծրագրի կառուցվածքը համապատասխանում է կազմակերպություններում աշխատանքային հարաբերությունների ծագման, փոփոխման ու դադարման գործընթացի փոխկապակցված փուլերի հաջորդականությանը: Դասընթացը նախատեսված է ուսումնասիրել մագիստրատուրայի բաժնի երկրորդ կուրսում, երբ ուսանողը յուրացրել է քննարկվող դասընթացի հիմքում ընկած մի շարք հիմնական մասնագիտական առարկաներ, այդ թվում՝ ՀՀ աշխատանքային իրավունքը, ՀՀ քաղաքացիական իրավունքը, ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքը և այլն:

«Կազմակերպություններում կադրային գործի կազմակերպման իրավական կարգավորումը» դասընթացի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել բուհերի ուսանողների, կազմակերպության իրավախորհրդատուների, կազմակերպությունների շահերը երրորդ անձանց առջև ներկայացնելու հետ կապված գործունեություն իրականացնող այլ անձանց համար: Ուսանողների տեսական գիտելիքներն ամրապնդելու նպատակով ծրագրում նախատեսված են նաև գործնական հանձնարարություններ: Ծրագիրը պարունակում է նաև դասընթացն ուսումնասիրելու համար առաջարկվող նորմատիվ իրավական ակտերի և մասնագիտական գրականության ցանկը:

Դասընթացին հատկացված է ---- ժամ, որից ----- ը դասախոսություն, -----ը՝ սեմինար և գործնական պարապմունք:

**Թեմա 1. Կազմակերպություններում կադրային գործի կազմակերպման
հասկացությունը և նշանակությունը**

- Կադրային գործը որպես կազմակերպության գործավարության ինքնուրույն բաղադրիչ
- Կադրային գործավարության ապահովումը
- Կադրային գործի կազմակերպման նշանակությունը

Թեմա 2. Կադրային գործի կազմակերպման սկզբունքները

- Կադրերի ընտրության ազատությունը
- Կադրերի ընտրության հրապարակայնությունը
- Կազմակերպության միջոցների տնտեսումը
- Տեղեկատվության սահմանափակումը

**Թեմա 3. Կադրային գործի կազմակերպումը աշխատանքային հարաբերությունների
ծագման ընթացքում**

- Թափուր աշխատատեղի համալրման նպատակով կազմակերպվող մրցույթի մասին հրապարակային հայտարարություններ մշակելը և կատարելը
- Աշխատանքի հրավերը
- Հրավիրված աշխատակցի հետ ընդհանուր-ճանաչողական և մասնագիտական հարցազրույցը
- Աշխատանքային պայմանագրի կնքմանը խոչընդոտող հանգամանքների բացահայտումը
- Աշխատանքի պայմաններին և կազմակերպությունում գործող ներքին իրավական ակտերին ծանոթացնելը
- Աշխատանքային պայմանագրի կնքումը
- Աշխատանքային պայմանագրի կնքման ու աշխատանքը սկսելու պայմանների իրավաբանական ձևակերպումը

**Թեմա 4. Կադրային գործի կազմակերպումը աշխատողների աշխատանքը կիրառելիս և
աշխատանքի պայմանները փոփոխելիս**

- Աշխատողների խրախուսումը
- Աշխատողների կարգապահական պատասխանատվությունը
- Գործուղումների ձևակերպումը

- Արձակուրդի և աշխատանքային պարտականությունների կատարումից հարգելի պատճառներով ազատելու իրավաբանական ձևակերպումը
- Աշխատողին ժամանակավորապես այլ աշխատանքի փոխադրման ձևակերպումը
- Աշխատանքի նորմալ պայմաններից շեղումներ կատարելու (արտաժամյա, գիշերային աշխատանքների ներգրավելը),
- Աշխատանքի պայմանների փոփոխման ձևակերպումը
- Համատեղությունների և ժամանակավորապես բացակայող աշխատողներին փոխարինելու ձևակերպումները

Թեմա 5. Աշխատողների անհատական տվյալների պաշտպանությունը

- Աշխատողների անհատական տվյալների պահպանությունը
- Աշխատողների անհատական տվյալների տնօրինումը

Թեմա 6. Տեղեկատվության տրամադրումը

- Աշխատողի պահանջով տեղեկատվության (փաստաթղթերի) տրամադրումը
- Պետական մարմինների պահանջով տեղեկատվության տրամադրումը
- Այլ անձանց պահանջով տեղեկատվության տրամադրումը

Թեմա 7. Կադրային գործի կազմակերպումը աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելիս

- Աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին բանակցությունները
- Աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին ծանուցումները
- Աշխատանքային պայմանագրի լուծման ձևակերպումը
- Աշխատանքային պայմանագրի լուծման (աշխատանքային իրավահարաբերությունների դադարեցման) հետ կապված իրավաբանական անհրաժեշտ գործողությունների կատարումը

Գործնական հանձնարարություններ

1. Կազմել աշխատանքի ընդունվելու մասին կազմակերպությանը ներկայացվող դիմում:
2. Կազմել կոլեկտիվ պայմանագիր:
3. Կազմել կոլեկտիվ պայմանագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին համաձայնագիր
4. Կազմել աշխատանքային պայմանագիր:
5. Կազմել քաղաքացուն աշխատանքի ընդունելու մասին հրաման:
6. Կազմել աշխատողին այլ աշխատանքի փոխադրելու մասին հրաման:

7. Կազմել աշխատողի աշխատանքի պայմանները փոփոխելու մասին հրաման:
8. Կազմել աշխատողին գիշերային և (կամ) արտաժամյա աշխատանքի ներգրավելու մասին հրաման:
9. Կատարել աշխատանքային գրքույկում օրենքով նախատեսված գրառումներ:
10. Կատարել աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրում օրենսդրությամբ նախատեսված գրառումներ:
11. Կազմել աշխատողին խրախուսելու մասին հրաման:
12. Կազմել աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր:
13. Կազմել աշխատողի լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր (համաձայնագիր):
14. Կազմել աշխատողին աշխատանքից ազատելու մասին հրաման:
15. Կազմել կազմակերպության ներքին կարգապահական կանոններ:
16. Կազմել կազմակերպությունում աշխատանքի անցնելու մրցութային Կարգ:
17. Կազմել կազմակերպության աշխատողների որակավորման ստուգման (ատեստավորման) Կարգ:

ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Ց Ա Ն Կ

ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (1995),
2. ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004),
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (1998),
4. ՀՀ օրենքը «Արհեստակցական միությունների մասին» (2000),
5. ՀՀ օրենքը «Գործատուների միությունների մասին» (2007),
6. ՀՀ օրենքը «Աշխատանքի պետական տեսչության մասին» (2005),
7. ՀՀ օրենքը «Աշխատանքի վարձատրության մասին» (2001),
8. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀԽՍՀ օրենսգիրք (1985),
9. ՀՀ օրենքը «Իրավական ակտերի մասին» (2002),

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

10. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948),
11. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966),

ՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

12. **Պետրոսյան Գ.Վ.** Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք: (քուիական դասագիրք): Ընդհանուր մաս: Երևանի պետ. համալս.-Եր., Երևանի համալս. հրատ., 2009:
13. **Գ. Վ. Պետրոսյան:** Աշխատողի և գորածատուի շահերի զուգակցումը ՀՀ աշխատանքային օրենսգրքում: Իրավագիտության հարցեր: Երևան, 2007, N 1,
14. **Գ. Վ. Պետրոսյան:** Ժամկետային աշխատանքային պայմանագրի իրավական բնութագիրը (համեմատական վերլուծություն): Իրավագիտության հարցեր: Երևան, 2003, N 1,
15. **Գ. Վ. Պետրոսյան:** Առանձին կատեգորիայի աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանությունը: Իրավագիտության հարցեր: Երևան, 1998, N 1,
16. **Գ. Վ. Պետրոսյան:** Ձեռնարկության ղեկավարի կարգապահական պատասխանատվությունը: Իրավագիտության հարցեր, Երևան, 1998 թ., N 3,
17. **Գ. Վ. Պետրոսյան:** Աշխատանքային օրենսդրության խախտման բնութագիրը: Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1997թ., N 3,
18. Êîììáíðàðèé è Òðóáíáîíó êíäàèñó Ðíññèéñéíé Ôäääðàöèè (íîâúé).-Ì .: Èçä-âí Ýèñì î, 2005,
19. Òðóáíáîá í ðàáî Ðíññèé. Ó-ááíèé. Ì î ää. **À. Ñ. Ì àøéíâà** . Ñíá., 1994,
20. **Դóñíá È.Í ., Õíèèóííâà Á.Í .** Òðóáíáîá í ðàáî Ðíññèé. Ó-ááíèé. Ì : "Բðèñò". 1997,
21. **Ñèáðèáíá Á.Ñ. ÈÇÌ Ò ÐÕ.** Ì ññòáðàéíúé êîììáíðàðèé, áíáèèç è ðàéíìáíáàöèè ìì ìðèì áíáíèþ. ÑÍ Ե. 1997,
22. **Òèðòíì èðíá Ì .Բ.** Òðóáíáîá ñííðú (êííðàèòú). Ì áðàçòú áíèóì áíòíâ, êîììáíðàðèé, ììðì àðèáíúá àèòú. Ì . 1999.

23. Трудовое право России. Учебник для вузов. Отв. ред-ы **Р. З. Лившиц и Ю. П. Орловский**. М, ИНФРА.М-НОРМА, 1998,
24. **Êîÿðåí È. Æ.** Í àäçîð è êîòòîü çà ñîáåðäåè çàêîíîäàäåüñòàà î òòóåå. Ì ., Ëçä. Ì îñå. óí-òà, 1982,
25. **Êàëóæí Ûé Ñ. Æ.** Í òààòòóååíîü äèæåííîé èòò ïäåèðåýðèý çà íàðóäíèý çàêîíîäàäåüñòàà î òòóåå. Æâîäà. êîí. äåññ. Ì ., 1973,
26. **Ñóòîäàðåý È. Æ.** Í òààòòóååíîü çà íàðóäíèý òòóååíè çàêîíîäàäåüñòàà. Ì ., Ëäå. èò., 1990.